ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2020 թվականի N 51

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում 2020 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական եվ մասնագիտական հսկողություն իրականացնելու մասին» N4 որոշմամբ հաստատված հավելվածի աշխատանքային խմբում լրացնել «առողջապահության բաժնի պետ Մերի Շահազիզյան» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում 2020 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական եվ մասնագիտական հսկողություն իրականացնելու մասին» N4 որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«2. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանով»:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ